

ՄՈԱՅԱՆԻ ԶԱՆԱՐՄԱՅԱԼ ԳԱԽԱՌԸ

(Աւագ-Բեր-Լու - Պար-Լու - - - - - Ժողովրդ-Եր-Լու)

(Շարունակութիւն տես Բազմ. էջ 297)

Պատիւներ. — Պատիժներ տալիս են զաբէթը կամ քնադիտական. նրանք իրենց քմահաճոյքի համաձայն պատժում են յանցաւորին: Իբրեւ պատիժներ գործադրում են հետեւեալ միջոցները.

1. Գոգուտ իրենց սուգաւոր են առնում:

2. Յանցաւորին կապում են ծառից և 100 — 500 ճիւղոտ են զարկում կամ կապում են ձեռ. ներն ու ոտները և զազանաբար ծեծում. յաճախ ծեծի տակ ուշաթափւում են:

3. Բանաւարկում են և օրելով քաղցած թող. նում:

4. Դադում են յանցաւորի ոտներն ու ձեռ. ները:

5. Եթէ մարդասպանութիւն է պատահում՝ արեան գինն են առնում մարդասպանից:

Հարկեր. — Չահարմահալի գիւղացիները հո. դով և ջրով պատկանում են խաներին: Նրանք խաների հողերը վարում են, ցանում և դէմի հացահատիկներից ստանում չորս բաժնից երեքը, որ կոչւում է չարքոռ. բացի չարքոռից՝ շատ գիւղերի խաներն ստանում են նաև 100ին 3 լիւր ցորեն կամ գարի, որ կոչւում է սուպլուէ: Ջրովի հացահատիկներից գիւղացին ստանում է երեք բաժնից երկուսը, որ կոչւում է սեքու կամ եր. կուսուկէս մասը հողագործին է վերցնում, մէկը խանը, որ կոչւում է սեուկիւր, և կամ երկուսը խանն է տանում, երեքը գիւղացին. սա կոչւում է յուճըչոռ: Շատ գիւղերում խաներն առնում են նաև մի լիւր ևս, որ կոչւում է փոշաք սաւնգ: Բացի սրանցից՝ իւրաքանչիւր գիւղացի տարեկան վճարում է խանին.

Ոչխարին	10 շայի.
Կովին	2 զուան (ոխալ).
Էգ ձիուն (մատենանին)	3 »
Ջորուն	3 »
Իսկ իւրաքանչիւր խոնջընից ստանում է կալածատէր խանը.	
Գլխահարկ	3 զուան.
Ոչխարից	10 շայի.
Կովից	2 զուան.
Էգ ձիուց	3 »
Ջորուց	3 »

Այս բոլոր հարկերն իբր թէ օրինաւոր են համարւում, որ ստանում է խանը: Սակայն այդ դեռ բոլորը չէ. կան մի շարք կամայական, ա. պօրինի հարկեր, որոնց հետեւանքով գիւղացի. ներն օրըստօրէ հիւծւում և դիմում են դէպի տնտեսական քայքայում: Այսպէս, գիւղատէր — խանը 20—30 ձիււրով զալիս է գիւղ և այնտեղ 2—3 օր մնում: Գիւղացիներն ստիպւած են թիարկ. ւում են 40—50 թուման ծախքի: Կամ խանի որդին պսակւում է, հարսանիքի համար վառե. լիք (զազ), հաւ, իւղ, ձու, յարդ և այլն պէտք է գիւղացիները ձրի մատակարարեն, իսկ եթէ խանը կամ նրանից մէկը մեռնի՝ որոշ ծախքերը պէտք է գիւղացիները հոգան: Նոյնպէս գիւղա. ցիները պարտաւոր են խանի կողմից գիւղ եկող հիւրերի համար հաւ, ձու, սեր, կարագ, մեղր և այլն տալ: Սրա վրայ աւելացնենք ձրի աշխա. տանքը, որ խեղճ գիւղացիների հոգին է հանում. իւրաքանչիւր օր, միջին հաշւով, հինգ մարդ ձրի աշխատում են խաների համար, օր. տուն են նորոգում, արտերը ջրում, առուները մա. քրում, քար կամ հող կրում, և այլն: Նոյնպէս գիւղացու լաւ ձին գիւղատէր-խանը չնչին վճարով առնում է: Խանի ապօրինի հարկերի վրայ աւե. լացնենք զաբէթի կամայականութիւններն ու քմահաճոյքները: Շատ անգամ գիւղատէրը փող է տալիս զաբէթին, որ իր համար վառելիք (զազ) առնի. զաբէթն իւրացնում է փողը և գիւղացի. ներից ձրի է առնում զազը: Կամ խանը սերմա. ցու է տալիս զաբէթին, որ բաժանէ գիւղացի. ներին. նա քնալանթարի հետ միախորհուրդ է լինում և սերմացից 100 լիւր վերցնում, ապա՝ փոխարէնը հող խառնելով բաժանում է գիւղացի. ներին, իսկ կշռելիս՝ խարդախում է: Յիշեալ կե. ղեքումներն ու հարստահարութիւններն արդիւնք են կալածատիրական — ճորտատիրական այն կարգերի, որոնք մինչև օրս էլ գերիշխում են պարսկաստանում: Պորտաբոյժ այդ դասակար. գերի գերիշխանութեան ներքոյ գիւղացիութիւնը աստիճանաբար հիւծւում է և ոչնչանում:

Ախտատուր գիւղացիութիւնը այդ ծանր և խեղդիչ դրութիւնից կարելի է ազատել մի միայն համայնական հասարակարգով:

Տնտեսական վիճակ. — Չահարմահալում գիւղացիները—պարսիկ և հայ—տնտեսական ծանր ու անմիթիթ պայմանների մէջ են գտնւում բնդհանրապէս: Գլխաւոր պատճառը միջնադա. բեան ճորտական սոսկալի դրութիւնն է, որ մինչ. չև օրս տիրապետում է գիւղերում:

Գիւղացիները բոլորն էլ հողագուրկ — ուայեա երկրագործներ են. նրանք չունին սեփական հո.

ղեր. մի քանի գիւղերում էլ, օր. Դէյշէն, Շահ-բուաղ, տները գիւղացիներին չեն պատկանում. գիւղատէրերն են չինեւ տեւէ և յանձնել թայեաթներին, իսկ հրը կամեանա՝ կարող են գիւղացիներին դուրս չպրտել: Կան և երկրագործական գործիքներից ու անասուններից գուրկ գիւղացիներ, որոնք որպէս բաւուր (խոշորչին) ծառայում են հողատիրոջ կամ ունեւոր գիւղացիների մօտ, ամենածանր պայմաններում: Աւելացնենք սրա վրայ կաւածատէրերի, զաբէթիների և քեալանթարների անխիղճ ճնշումներն ու հարստահարութիւնները, որոնց հետեանքով գիւղացիները չեն կարողանում վայելել իրենց դառն քրտնջի արդիւնքը: Նրանք կամայական հարկերի և ճորտային սոսկալի կարգերի մէջ կեդեղւում են, շահագործւում, թալանւում, կողոպտւում և օրը թոթօրէ ընկնում ծանր պարտքերի ներքոյ: Շատ քիչ գիւղ կը գտնէք, որի գիւղացիները ծանր պարտքերի, անարդար ճնշումների և կեղեքումների տակ ընկած չլինեն: Նրանց տնտեսական դրութիւնը համարեա օրէցօր վատթարանում է և նրանցից շատերը չեն կարողանում իրենց աւանտարարական պահանջներին անգամ բաւարարութիւն տալ: Այս տխուր պատկերի վրայ աւելացնենք բնութեան պատահարները, որոնք աւելի ու աւելին դառնացնում աշխատաւոր գիւղացիների կեանքը: Գծենք այստեղ մի քանի սեւ տարիների պատկերը: 1916 թիւն ցուրտը փչացնում է գիւղացու հունձքը և նա չի ունենում աւելի մեծ քանակութեամբ հացահատիկներ: 1917 թիւն մորեխն է փչացնում և գիւղացու տնտեսական դրութիւնն աւելի է վատթարանում, որի հետեանքով 800 երիտասարդներ պանդխտւում են Բասրա, Նասիքի և այլ տեղեր: Այդ պանդխտներից 400ը միայն վերադառնում են, իսկ մնացեալները կլիմայական խիստ սոււթիւններին զոհ են գնում: 1918 թիւն նոյն պէս ցուրտ փչացնում է հունձքը և գիւղացին ընկնում է ծանր պարտքերի տակ: Միւս թարականը միայն այն է՝ որ խաներն օգնութեան են հասնում գիւղացիներին սերմացու պարտք տալով: 1919 թիւն զօմարկին (անասունների հիւանդութիւնը) միանգամայն քայքայում է գիւղացիներն տնտեսական վիճակը: 1920 թիւն հունձքը բաւարար է լինում, բայց գիւղացիները չեն կարողանում ծածկել նախորդ տարիների վնասները, որովհետեւ ցորենի գինը նկատելի կերպով իջնում է: Ահա այսպիսի մի տխուր պատկեր է ներկայացնում Չահարմահալի գիւղացիների տնտեսական դրութիւնը:

Երրոկան վիճակ. — Շատ մոայլ և ողբերգական պատկեր է ներկայացնում ընդհանրապէս Չահարմահալի հայ գիւղացիութեան կրթական վիճակը: Գիւղացիների մեծամասնութիւնը խաթափում է խոր տգիտութեան և նախապաշարում: Ների մէջ, Նրանք անգիտակից են դէպ ի կեանքը: Այդ ցաւալի երեւոյթը պիտի բացատրել նրանով, որ 1) Գիւղացիները դարերի ընթացքում ապրելով քաղաքակրթ ազգերից հեռու, մեկուտացած, կղզիացած չըլանի մէջ, մնացել են խաւար և տգէտ, 2) Նրանք զգրի և թերթի երես չեն տեսնում և 3) Ամենազլխաւորը աւելորդ զաւառում չկայ օրինակելի կրթական մի հաստատութիւն, որ նպաստէ գիւղացիների մշտաւոր և բարոյական դաստիարակութեանը: Չահարմահալի տասն և չորս հայաբնակ գիւղերի մէջ (ուր կայ 767 տուն ազգաբնակչութիւն) միայն չորսը. — Լիվասեան, Վերին-Փոսարք, Մամուքա և Սիրաք—ունին քիչ թէ շատ կանոնաւոր դպրոցական չէնքեր, միւս գիւղերից միայն Սինազանը եկեղեցու բակում ունի խղճուկ մի դպրոց (չա քաղցրիկ մի սենեակ է), իսկ մնացեալ գիւղերը գուրկ են դպրոցներից: Ընդհանրապէս եղած դպրոցները անբարեկարգ և անապահով դպրոցներ են: Նրանց անխնայ և խախտու դրութեան նպաստում է գլխաւորապէս տնտեսականը. համարեա ոչ մի դպրոց տնտեսապէս ապահոված չէ. ոչ դրամաւորւն ունին, ոչ էլ մշտական եկամուտի աղբիւրներ: Ուսուցիչ-վարժուհիների ուսնիկները ձեռք են բերում այլակերտների թշուազներով, նւէրներով և ընկերութիւնների նիւթական նպատանքով: Գայլով նրանց ներքին կրթական կենսոյթին, պիտի ասել, որ շատ տխուր է. նրանք կատավարւում են ամէն տարի փոփոխուող պատահական ուսուցիչներով և գիւղական քահանաներով, որոնք ուսուցչական ծանր և պատասխանատու պաշտօնը վարելու համապատասխան պատրաստութիւն չունենալով՝ դաստանդում են «Տէլ-թօղիկան» սահմանափակ ծրագրով, որով չեն կարողանում ժամանակի պահանջին համեմատ մատաղ սերունդը կրթել: Այս տխուր երեւոյթին որոշ չափով նըպաստում է այն՝ որ Չահարմահալի դպրոցները չունեն պատրաստած ուսուցչական ծրագիր, որով զեն կազմաւէին բոլոր ուսուցիչ-ուսնիկները, և այդ է գլխաւոր պատճառը՝ որ նրանցից իւրաքանչիւրն իր հասկացած մեթոդով է ընթանում, և գործում է այնպէս ինչպէս ինքն է հասկանում: Գայրոցների անմեղիք տարիներն նպաստում է և այն՝ որ չկայ

ձևերով մի մուրմին, որը և ուղղութիւն տար ուսումնական գործին և դպրոցները գնէր կա- նոնաւոր և հաստատուն հիմքերի վրայ: Այսպէս տնտես և գիւղական դպրոցների պատկերը և ոչ մի միջինարական երևոյթ չկայ նրանում:

Այդ դառն իրողութիւնը կարելի է մասամբ կերպարանափոխել հետեւեւ միջոցով. Զահար- մահայի գիւղելը մեծամասնութեամբ միմեանց մօտ են և երթեկութեան դիւրութիւն ու հնա- բաւորութիւն կայ: Ահա այդ հանգամանքը նը- կատի առնելով՝ նպատակայարմար է հիմնել մանկավարժ ուսուցիչներին դասաւանդութեամբ կենտրոնական մի դպրոց, որն աւելի մեծ չա- փով արդիւնք կտայ՝ քան թէ գոյութիւն ունե- ցող տիրապետական դպրոցները: Հոյնպէս նպա- տակայարմար է հիմնել կրթասիրաց մի ինկի- ղոսի, որն իրեն նպատակ դնէ հոգալ դպրոցի տնտեսականը:

Այս պարտականութիւնները ծանրանում են Զահարմահայի ունեւոր պանդուխտ անհատների վրայ: Պէտք է նրանք լուրջ ուշադրութիւն դարձնեն իրենց համագիւղացիների կրթական խնդրի վրայ, համակիւն այդ վեճ գաղափարով և իրենց նիւթական օժանդակութեամբ կառու- ցան են մի կենտրոնական դպրոց կամ գաւառը պատեն դպրոցական ցանցով: Հոյնպէս բարո- յական պարտականութիւն է ընկնում գիւղերի գիտակից երիտասարդների, քեաղիւղականների և ընկերութեան անդամների վրայ: Պէտք է նրանք նիւթապէս և բարոյապէս օգնեն իրենց կրթա- կան հիմնարկութիւններին և բարձրացնեն նրանց մակարդակը, այն գիտակցութեամբ՝ որ իրենց տնտեսական և կուլտուրական կեանքի բարելա-ւումը կախած է միայն և միայն դպրոցներից:

Գրադարանները. — Արդող Զահարմահայում գոյութիւն ունեն միմիայն երեք գրադարաններ, որոնք հիմնւել են մի քանի գիտակից անձերի նախաձեռնութեամբ: Դրանցից առաջինը 1 խվա- սեանի «Պապովեան» դպրոցի գրադարանն է, որի գրքերի թիւն է 143 կտոր, երկրորդը Վե-

րին-Քօնարքի «Արշալոյս» միութեան գրադա- րանն է, ուր կայ մօտ 70 կտոր գիրք, իսկ եր- րորդը Յաժի-Քօնարքի «Վաչեան» դպրոցի գրա- դարանն է, որ ունի 200 հատոր գիրք և մի քանի կիսատ-պատա պարբերական թերթեր: Թէ էրբ են հիմնւել յիշեալ գրադարանները և ո՞վքեր են եղել նախաձեռնողները, ոչինչ յայտնի չէ, չկայ ոչ մի դոկումենտ: Այդ գրադարաններում զբո-ւնւած գրքերի մէջ պատմական, վիպական զբո-ւնւածքներն իրենց քանակութեամբ առաջին տեղն են բռնում, մանկական գրաւածքները երկրորդ, իսկ թատերական, բանաստեղծական և կենսա- գրական գրաւածքները շատ չնչին տոկոս են կազ-մում: Բայց ո՞վքեր են օգտուում յիշեալ գրադա- դարաններից և ի՞նչ չափով: Յաւելով պիտի նկատենք, որ այդ մասին հաշիւներ չկան, այն- պէս որ դժուար է ճիշտ կարծիք արտայայտել, միայն այսքանը պարզ է, որ օգտուողները զիջա-ւորապէս դպրոցների աշակերտներն են, ուսու-ցիչ-ուսիները և դպրոցներն աւարտած պատա-նիները, իսկ գիւղացիների շատ չնչին տոկոսն է օգտուում, և դա հասկանալի պատճառով, որով-հետեւ նրանք մտաւորապէս շատ ցածր մակար-դակի վրայ գտնւելով՝ անընթերցասէր են: Գալով գրադարանների նիւթական միջոցներին՝ շատ աննախանդիկ դրութեան մէջ են գտնուում, բայց չնայած դրան՝ նրանք ձրի են և օգտւելու իրա-ւունք ունեն բոլորը:

Գրչագրերը. — Զահարմահայը բաւական հա-րուստ է գրչագրերով, որոնց գիւղացիները բերել են Հին-Ջուղայից, գաղթի ժամանակ, 1606 թւին: Համարեա գաւառի բոլոր եկեղեցիներն էլ ունեն մի կամ մի քանի ձեռագիր աւետա-րաններ, որոնք պահւում են մի առանձին խը-նամբով և սրբութեամբ: Այդ աւետարաններից մի քանիսը յայտնի են իրենց «Առտահալած», հրաշագործ և բուժիչ» յատկութիւններով, որոնց գիւղացիներն ուխտի են գնում, մոմ վառում, խոսնկ ծխում և շատ անգամ նրանց անուումով երդւում: Այսպէս, օրինակ, Հաշիւաբաղու «Ս. Մինաս» աւետարանը տարւայ մէջ բաւական «գէրի» ունի, իսկ Մամուքայի «Բժիշկ» աւե-տարանը տարին որոշ թիւով հիւանդ-ուխտաւոր-ներ է հիւրընկալում:

Ընդհանրապէս աւետարաններն ամուր կազմ ունեն, որոնցից շատերը զարդարւած են արծաթէ քանդակներով, ինչպէս, օր. Քրիստոսի խաչե-լութիւնը, Մայր Աստածածին, Մարիամ Մագ-դաղենացին, հրէշտակներ, և այլն: Աւետարան-ների նիւթը բամբակի թղթից է, միայն մի

1. Զահարմահայի «Տէր - Թօղեկեան» դպրոցի առ-բերութեան մէջ ուշագրաւ է հետեւեւ աղուր դպրո-ւսուցիչներից մէկը իւր աշակերտներից մէկի ձեռքերը գնում է գրասեղանի վրայ և հեկատով այնքան է զարկում՝ որ եղունջների տակից սկսում է արել ցայտել: Այդ օրակնքը երեխայի սիրտը ստում է դպրոցից, և որպէս զի այլեւս դպրոց չկայ՝ կօշիկները քաղում է իրենց գեղի ուսուցիչի մէջ:

քանսի մէջ. կազմի ներսում՝ կան մեծադիր հին մագաղաթեայ գրչագիրներ թերթեր:

Աւետարանների մեծ մասը գրւած են Մեսրոբեան բողոքագրերով, իսկ փոքր մասը միջին երկաթագրերով: Նրանցից շատերն աչքի են ընկնում իրենց պարզ, բայց զեղարւեստական ճաշակաւոր նախշերով, մանրանկարներով, լուսանցազարդերով, որոնք ընդհանրապէս թուրքական են, ձկնակերպ և մարդակերպ: Շատերն էլ անպաճճոյճ են և անզարդ:

Ընդհանրապէս նկարների արւեստը նուրբ չէ, բայց կենդանի է և տպւորիչ: Յաջող են զարդերը, իսկ մարդկային դէմքերը նկարւած են բաւական տգեղ: Բայց կան մի քանի գրչագրեր, որոնք աչքի են ընկնում իրենց հնագիտական, պատմական և զեղարւեստական արժէքներով: Նրանք հայ հնագրութեան և զեղարւեստեան, նկարչութեան ու մանրանկարչութեան արւեստ, ների վերաբերեալ առատ նիւթ են մատակարարում: Նրանցով ընթերցողը կարող է գաղափար կազմել հին հայ արւեստի մասին: Այդպիսի

գրչագրերից նշանաւոր է Մամուքա գիւղում Պ. Կարապետ Ղազարեանի տան գտնւած « բժիշկ » աւետարանը: Դա մագաղաթեայ ընտիր մի աւետարան է: Արժէքաւոր է նրա նուրբ մագաղաթը: Աւետարանը գրւած է մաքուր, կանոնաւոր և զեղեցիկ նստրագրով, բազմաթիւ զարդագրերով: Զարդարւած է թույնակերպ, մարդակերպ և ոսկեզօծ կարմիր և այլ գունաւոր տառերով: Յատկապէս ուշադրութեան արժանի են լուսանցքի զարդերը և մանրանկարները:

Դուռնոյ բոլոր գրչագրերն էլ իրենց բովանդակութեամբ կրօնական են և ընդհանրապէս զարդարւած են շոր աւետարանիչների պատկերներով: Դժբախտաբար նրանցից շատերը թրւական չեն կրում: Սովորաբար աւետարանների ետևում կան յիշատակագրեր, որոնց մէջ յիշատակւում է աւետարանը գրողի և նրա զերդաստանի անդամների անունները, իսկ վերջում յիշատակագրողը խնդրում է յիշել իրեն և իրեն. ների: Այն այդ ձեռագիրներից ցուցակը.

Գ Ի Ի Ղ Ե Բ Ը	Ո՞ր ՏՆԵՆ Ե ԳՏՆԻՈՒՄ	Հ ՏՈՂ ՊԱԾ	Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Բ Ը	Ն Ի Ի Թ Ը ՄԱԳԱՐԱԾ ԹԵ ԲԱՄԱՐԱՆԻ ԹՈՒՂԹ
Մամուռան	Ս. Յովհաննէս եկեղեցում	1	Անանուն է	Բամբակի Թուղթ
Ներքին-Քոնարբ	Ս. Աւետածածին	3	Առաքել. Ս. Գէորգ և Ս. Յովհաննէս	» »
Վերին-Քոնարբ	Ս. Գեորգ	2	Զրեթոր և Ս. Գեորգ	» »
Մամուքա	Ս. Աւետածածին	7	Համայնի, Դաղկամէր, Ս. Գեորգ, իսկ լորսը անանուն են,	» »
»	Կար. Ղազարեանի մօտ	1	Բժիշկ	Մագաղաթ
Հաջիբաբադ	Ս. Սարգիս	1	Ս. Մկրտիչ	Բամբակի Թուղթ
»	Հոփոսիմի Ղազարեանի մօտ	1	Ս. Մինաս	» »
Աւագարադ	Ս. Մինաս	1	Անանուն է	» »
Արաբ	Ս. Աւետածածին	1	Ս. Գեորգ	» »

Այս գրչագրերի արտաքին կազմերի, դիրքերի, տառերի, զարդերի և պատկերների մասին կը խօսենք զելդերի նկարագրութեան ժամանակ: Դժբախտաբար ժամանակի սղութեան պատճառով չկարողացանք ձեռագրերի մէջ գտնւած բոլոր նկարների մանրամասն քննութիւնն և ուսումնասիրութիւնը կատարել, նրանց թւականներն ու գրչագրողները ճշդել, յիշատակարանները

արտագրել և այլն. բաւականացանք միայն թրւուցիկ նկարագրութիւններով: Յարմար առիթով պիտի տանք նրանց մանրակրկիտ ուսումնասիրութիւնը:

Վ. Խենկո

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)